



Հաստատված է  
"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ Վարչության  
թիվ 233/01-04.12.20. որոշման  
Հավելված 1

Վարչության նախագահ

Ա. Խաչատրյան

Հրատարակման ամսաթիվը "04" Դեկտեմբերի" 2020թ.  
Անփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել,  
մանրամասների համար՝ [www.aeb.am](http://www.aeb.am),  
Հեռախոս - (37410)8686, (37410)51-09-10 (9105) - Բանկի տեղեկատու

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ  
«MOBILE BANKING» /«ONLINE BANKING» ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄՓՈՓԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2020

1. Անվանումը - "ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ" ԲԱՑ  
 ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
 Հասցե - Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1  
 Էլեկտրոնային հասցե - bank@aeb.am / callcenter@aeb.am  
 Կայք – www.aeb.am  
 Հեռախոս - (37410)8686, (37410)51-09-10 (9105)  
 Ֆաքս - (37410) 53-89-04

**«Mobile Banking» / «Online Banking» համակարգեր**

Սույն տեղեկատվական ամփոփագրով (այսուհետ՝ Ամփոփագիր) սահմանվում են «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) հաճախորդների կողմից «Mobile Banking» / «Online Banking» համակարգերում հաճախորդի գրանցման, սպասարկման ընթացակարգը և այլ պայմանները:

**Բաժին 1. Ընդհանուր հասկացություններ**

- 1.1. Համակարգ՝ Բանկի «Mobile Banking» / «Online Banking» համակարգեր:  
 1.2. «Mobile Banking» համակարգ՝ շարժական սարքերի համապատասխան հավելվածի միջոցով առանց Բանկ այցելության հաճախորդին ծառայությունների մատուցման/սպասարկման էլեկտրոնային համակարգ,  
 1.3. «Online Banking» համակարգ՝ համացանցի միջոցով առանց Բանկ այցելության հաճախորդին ծառայությունների մատուցման/սպասարկման էլեկտրոնային համակարգ:  
 1.4. Հաճախորդ՝ ֆիզիկական (անհատ ձեռնարկատեր) կամ իրավաբանական անձ, ով Բանկում ունի գործող հաշիվ(ներ),  
 1.5. Օգտագործող՝ Հաճախորդ կամ հաճախորդի ներկայացրած ֆիզիկական անձ, ով Համակարգում անցնում է գրանցման համապատասխան գործընթաց:  
 1.6. Օգտագործողի գրանցման տվյալներ՝ օգտագործողի մուտքանուն (էլ. փոստի հասցե), բջջային հեռախոսահամար, մեկանգամյա գաղտնաբառեր, անուն ազգանուն, ծննդյան ամսաթիվ:  
 1.7. Համակարգում օգտագործողի դեր – գրանցված օգտագործողին վերապահված իրավասություն: Համակարգում ԻԱ/ԱԶ օգտագործողների համար առկա դերերն են՝  
 -**Առաջին կամ Երկրորդ ստորագրող**, որոնք իրավասու են հաստատել գործարքները, այդ թվում՝ տալ վճարման հանձնարարականներ, կատարել փոխանցումներ, ելքագրել հաշիվներից գումարներ, կնքել այլ գործարքներ, ներկայացնել հայտեր, ինչպես նաև կատարել Համակարգով նախատեսված ցանկացած այլ գործողություններ: Ընդ որում, եթե Համակարգում գրանցվում է մեկ օգտագործող Առաջին ստորագրողի դերով, ապա վերջինս միանձնյա կարող է հաստատել գործարքներ, իսկ եթե Համակարգում գրանցվել են մեկից ավելի օգտագործողներ Առաջին և Երկրորդ ստորագրողի դերերով, ապա գործարքները պետք է հաստատվեն և Առաջին ստորագրողի կողմից, և երկրորդ ստորագրողի կողմից:  
 -**Ստեղծող**, ով իրավասու չէ հաստատել գործարքներ, սակայն կարող է ստեղծել փաստաթղթեր Առաջին և Երկրորդ ստորագրողի կողմից հաստատելու նպատակով,  
 -**Դիտորդ**, ով իրավասու չէ հաստատել գործարքներ կամ ստեղծել փաստաթղթեր, սակայն կարող է դիտել գործարքներ, հաշիվները :  
 1.8. Հաճախորդի նույնականացման տվյալներ՝ Օգտագործողի գրանցման տվյալները, Հաճախորդի հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթուղթ (ֆիզիկական անձ (ՖԱ) հաճախորդի դեպքում, իսկ իրավաբանական անձ (ԻԱ) կամ անհատ ձեռնարկատեր (ԱԶ) հաճախորդի դեպքում ՀՎՀՀ) և Բանկի ԳՕ համակարգում Հաճախորդի քարտի համարը համապատասխան մասնաճյուղում:  
 1.9. ՕՏՔ- Մեկանգամյա օգտագործման գաղտնաբառ,՝ Անվտանգության կոդ - Համակարգ մուտք գործելու համար («Online Banking»), ինչպես նաև գործարքների Հաստատման համար՝ կախված գումարից և տեսակից («Online Banking» և «Mobile Banking»);  
 1. 9. 1. sms-ով- այն կազմված է 4 թվից,  
 1. 9. 2. օգտագործողը ստանում է բանկից ստացված Տոկեն ասարքով, այն կազմված է 7 թվից:

**Բաժին 2. Համակարգում Հաճախորդի գրանցում**

- 2.1.1. Հաճախորդը Համակարգում գրանցվում է սույն բաժնով սահմանված ընթացակարգով:  
 2.1.2. Հաճախորդը ներկայացնում է Բանկին հայտ Համակարգում գրանցման և օգտագործողների տվյալների տրամադրման վերաբերյալ:  
 2.1.3. Օգտագործողը Համակարգից օգտվելու նպատակով www.aeb.am կայքից ընտրում է AEB Online հղումը («Online Banking» համակարգի դեպքում), ներբեռնում է «Mobile Banking» բջջային հավելվածը (Mobile Banking» համակարգի դեպքում):  
 2.1.4. Մուտք հղմամբ բացվող Մուտքանուն պատուհանում լրացվում է Հայտում նշված օգտագործողի էլեկտրոնային փոստի հասցեն, իսկ Գաղտնաբառ դաշտում լրացվում է՝ Բանկին տրամադրված էլ փոստին ուղարկված ժամանակավոր գաղտնաբառը (ԻԱ/ԱԶ հաճախորդների համար),, որից հետո Օգտագործողի գրանցման ավարտով վերջինս ստանում է Հաճախորդին մատուցվող ծառայություններին հասանելիություն:  
 2.1.4.1 «Mobile Banking» բջջային հավելվածը ներբեռնելուց հետո, ֆիզ. անձ հաճախորդը, գրանցվում է

հավելվածում լրացնելով Բանկին ներկայացված հայտի էլիտուրը և բջջային հեռախոսի համարը, Օգտագործողի ակտիվացման ավարտով՝ այն է համակարգի ադմինիստրատորը նույնականացնելով հաճախորդին կցում է հաշիվները Օգտագործողին վերջինս ստանում է Հաճախորդին մատուցվող ծառայություններին հասանելիություն :

2.1.5. Երբ Օգտագործողը բանկից ստանում է ժամանակավոր գաղտնաբառ պետք է փոխի այն:

### **Բաժին 3. Համակարգով առաջարկվող գործառնություններ.**

#### **3.1. Բանկային Հաշիվներ**

- 3.1.1. Հաշվի դիտում
- 3.1.2. Հաշվի բացում
- 3.1.3. Հաշվից քաղվածքների ստացում
- 3.1.4. Հաշվի վերաբերյալ տեղեկանքի ստացում
- 3.1.5. Հաշվից կանխիկացման հայտի ներկայացում

#### **3.2. Փոխանցումներ**

- 3.2.1. «Հեշտ» փոխանցում (նշելով ստացողի հեռախոսահամարը կամ էլ. փոստի հասցեն)(ՖԱ)
- 3.2.2. Փոխանցումներ հաճախորդի հաշիվների միջև
- 3.2.3. Փոխանցումներ ՀՀ-ում, դրամային և արտարժութային հաշիվների միջև
- 3.2.4. Փոխանցում քարտին (բանկային և քարտային հաշվից (քարտից)) (ՖԱ)
- 3.2.5. Միջազգային փոխանցումներ
- 3.2.6. Անհաշիվ վճարային համակարգերից գումարի ստացում քարտային (ընթացիկ) հաշվին MyTransfer ծառայության միջոցով (ՖԱ)

#### **3.3. Վճարումներ**

- 3.3.1. Կոմունալ (խմբային)
- 3.3.2. ՃՈ
- 3.3.3. Բջջային կապ
- 3.3.4. Ինտերնետ

#### **3.4. Վճարային քարտեր**

- 3.4.1. Քարտային հաշվի դիտում
- 3.4.2. Քարտի կամ լրացուցիչ քարտի պատվիրում
- 3.4.3. Քարտի վերաթողարկում
- 3.4.4. Քարտի բլոկավորում/ապարկավորում
- 3.4.5. Քարտի կանխիկացվող գումարի/քանակի սահմանաչափերի փոփոխում
- 3.4.6. Քարտային հաշվի համալրում
- 3.4.7. Քարտային հաշվից փոխանցումների կատարում,
- 3.4.8. Քարտի sms ծանուցների կարգավորումների կատարում
- 3.4.9. Քարտային հաշիվների քաղվածքների ստացում

#### **3.5. Ավանդային հաշիվներ**

- 3.5.1. Ավանդային հաշիվների բացում
- 3.5.2. Ավանդային հաշիվների համալրումներ
- 3.5.3. Ավանդային հաշիվներին ներդրված ավանդի տոկոսների ստացում
- 3.5.4. Ավանդային հաշիվներին ներդրված ավանդի հետ վերադարձ
- 3.5.5. Ավանդային հաշիվների քաղվածքների ստացում

#### **3.6. Վարկեր**

- 3.6.1. Վարկի դիմում
- 3.6.2. Վարկի հերթական/մայր գումարի մարում
- 3.6.3. Վարկի մասին տեղեկատվության ստացում
- 3.6.4. Վարկային հաշիվների քաղվածքների ստացում
- 3.6.5. Վարկային գծի սահմանաչափի նվազեցում

### **3.7. Այլ գործառնություններ**

- 3.7.1. Պարբերական փոխանցումների կատարում /խմբային կոմունալ վճարումներ և այլն/
- 3.7.2. Կենսաթոշակային հաշվի քաղվածքների ստացում
- 3.7.3. Ձևանմուշների պահպանում, փաստաթղթերի կրկնօրինակում
- 3.7.4. Տարադրամի փոխանակում:
- 3.8. Բանկի հետ հաղորդակցում
- 3.8.1. Բանկին նամակների, դիմումների, առաջարկների ուղարկում
- 3.8.2. Բանկից պատասխանների, հաղորդագրությունների, ծանուցումների ստացում:

### **Բաժին 4. Այլ պայմաններ և պահանջներ**

- 4.1. Համակարգը թույլատրում է 3 անհաջող մուտքի փորձ կատարել: Երեքից ավել անհաջող փորձ կատարելու դեպքում տվյալ օգտագործողի մուտքի իրավունքը բլոկավորվում է:
- 4.2. Բանկը իրավասու է բլոկավորվել օգտագործողի մուտքը՝ հաճախորդի չնույնականացվելու դեպքում, ինչպես նաև Հաճախորդի հետ կնքված բանկային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանագրով, ընդհանուր պայմաններով սահմանված դեպքերում:
- 4.3. Հաճախորդն իրավասու է դիմելով բանկին բլոկավորվել օգտագործողի մուտքի իրավունքը համակարգ կամ փոփոխել օգտագործողներին:
- 4.4. Համակարգով գործառնությունների կատարման համար պարտադիր են Հաճախորդի կողմից Բանկի հետ կնքված բանկային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանագրի (եթե կնքված չէ, ապա Հաճախորդը պարտավոր է անհապաղ կնքել այն կամ Համակարգում գրանցվելու պահից Բանկում գործող այդ պայմանագիրը համարվում է կնքված Բանկի և հաճախորդի միջև), Ընդհանուր Պայմանների և Սակագների պահանջների կատարումը և պահպանումը, ինչպես նաև Հաճախորդի նույնականացումը:
- 4.5. Հաճախորդի նույնականացումը Համակարգում հաճախորդին որպես Օգտագործող գրանցումն է, որից հետո հաճախորդը ստանում է համակարգն օգտագործողի մուտքանուն և ժամանակավոր գաղտնաբառ, որոնց օգտագործմամբ Հաճախորդը համարվում է նույնականացված:
- 4.6. Հաճախորդի նույնականացումից հետո Համակարգով թույլատրվող ցանկացած գործողության և/կամ գործառնության/գործարքի կատարումը համարվում է Հաճախորդի կողմից և/կամ նրա հանձնարարականով փաստացի կատարված գործարք, իսկ դրա վերաբերյալ համակարգում ձևավորված տեղեկատվությունը ստանում է հաճախորդի կողմից ստորագրված գրավոր փաստաթղթային գործարքին համարժեք իրավաբանական ուժ և նշանակություն:
- 4.7. Եթե Օգտագործողը անմիջականորեն Հաճախորդը չէ, ապա այդ Օգտագործողը համարվում է Հաճախորդի լիազոր ներկայացուցիչ Հաճախորդի գրանցման Հայտում նրան վերապահված իրավասության դերով և վերջինիս կատարած գործառնությունները համարվում են Հաճախորդի կողմից կատարված գործառնություններ (այդ իրավասությունը Հաճախորդը կարող է դադարեցնել դրա մասին գրավոր հաստատելով Բանկում):
- 4.8. Հաճախորդը(օգտագործողը) պարտավոր է գաղտնի պահել գաղտնաբառերը, չհայտնել դրանք երրորդ անձանց, չընձեռել հնարավորություն որ դրանք հասանելի դառնան այլ անձանց և ձեռնարկել անվտանգության հնարավոր բոլոր միջոցները, իսկ ցանկացած արտահոսքի կամ նման վտանգի դեպքում փոփոխել համակարգում տվյալ գաղտնաբառերը, կապվելով բանկի հետ կասեցնել դրանց օգտագործմամբ և կիրառմամբ Հաճախորդի նույնականացումը:
- 4.9. Հաճախորդի նույնականացումը հավաստելու համար Համակարգը կարող է առաջադրել անվտանգության լրացուցիչ միջոցներ (գրանցված հեռախոսահամարին SMS-ով մեկանգամյա գաղտնաբառի ուղարկում, և/կամ այլ), որոնց կիրառմամբ Համակարգ մուտք գործողի և/կամ գործարքներ կատարողի և Հաճախորդի նույնականացումը համարվում է հավաստված:
- 4.10. Բանկն իրավունք ունի Համակարգով գործառնությունների կատարման համար Հաճախորդից գանձել Բանկի Սակագներով սահմանված միջնորդավճարները, ինչպես նաև երրորդ անձանց կողմից Համակարգի սպասարկման հետ կապված այլ վճարները (SMS –ի վճար և /կամ այլ):
- 4.11. Ամփոփագիրը Հաճախորդի պահանջով անվճար տրամադրվում է թղթային եղանակով, ինչպես նաև հասանելի է Բանկի գործունեության բոլոր վայրերում (Բանկի գլխամասային գրասենյակ և մասնաճյուղեր):
- 4.12. Համակարգի օգտագործման այլ պայմաններին Հաճախորդը կարող է ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքէջից:
- 4.13. Ամփոփագրի հրապարակման ամսաթվից հետո Ամփոփագրի պայմանները կարող են փոփոխված լինել, ինչը Հաճախորդը կարող է պարզել կապվելով Ամփոփագրում նշված Բանկի կապի միջոցներով:

<b>XVIII. Հաշիվների հեռակառավարում**</b>		
<b>Ա. AEB Mobile bank / AEB Online համակարգով (Այսուհետև Համակարգ) տրամադրվող ծառայությունների արտոնյալ սակագներ<sup>1</sup></b>	<b>Ռեզիդենտ</b>	<b>Ոչ ռեզիդենտ և ոչ ՀՀ քաղաքացի</b>
1. AEB Mobile bank Հավելվածի ներբեռնում և սպասարկում /ՖԱ/	Անվճար	
2. Համակարգի գաղտնաբառի փոփոխություն	անվճար	
3. Պլաստիկ քարտերով գործարքներ <sup>2</sup>		
3.1 Քարտային հաշվից ՀՀ բանկերի հաճախորդների օգտին փոխանցումներ <sup>5</sup>	անվճար	
3.2 Քարտի բլոկավորում	անվճար	
3.3 Համակարգով բլոկավորված քարտի ապաբլոկավորում	անվճար	
3.4 "Փոխանցում քարտին" Բանկի քարտերին	0.3%	
3.5 "Փոխանցում քարտին" <<Արմենիան Քարդ>> համակարգի անդամ բանկերի քարտերին	0.5%	
4. Բանկային հաշիվներից ԱՄՆ դոլարով և ԵՎՐՈ փոխանցումներ ՀՀ տարածքում	անվճար	
5. Գործարքների հաստատման համար ստացվող SMS*—ի մեկ միավորի արժեքն է	10 դրամ	
6. AEB Mobile bank համակարգ տրամադրելիս բանկային դրամային ընթացիկ հաշիվ չունեցող հաճախորդի դրամային հաշվի բացում	Անվճար	
7. AEB Mobile bank/ AEB Online համակարգի մուտքի ապաբլոկավորում	Անվճար	
8. AEB Mobile bank/ AEB Online համակարգով ֆիզիկական անձանցից ներգրավվող IX Ժամկետային ավանդներ բաժնում՝ Դասական ավանդատեսակի համար սահմանված է՝ <sup>6</sup>	0.25 նիշով բարձր տոկոսադրույք	
9. Նոր գաղտնաբառի ուղարկում էլ. փոստի միջոցով	անվճար	
10. Համակարգի նոր գաղտնաբառի ուղարկում SMS* հաղորդագրության միջոցով	10 դրամ	
<b>11. Սպասարկման վճար</b>		
11.1 ԻԱ/ԱՁ հաճախորդների համար "Online bank" Համակարգի մուտք՝ առանց անվտանգության կոդի <sup>4</sup>	1000 դրամ ամսական	2000 դրամ ամսական
11.2 ԻԱ/ԱՁ/ՖԱ հաճախորդի ցանկությամբ համակարգի մուտք՝ անվտանգության կոդով, կոդի ստացումը սարքի միջոցով <sup>3</sup>	միանվագ՝ 10000 դրամ +1000 դրամ ամսական	միանվագ՝ 30000 դրամ +2000 դրամ ամսական
11.3 ԻԱ/ԱՁ/ՖԱ հաճախորդի ցանկությամբ համակարգի մուտք՝ անվտանգության կոդով, կոդի ստացումը SMS* հաղորդագրության միջոցով (առանց սարքի) <sup>4</sup>	2000 դրամ ամսական	4000 դրամ ամսական
11.4 ԻԱ/ԱՁ/ՖԱ հաճախորդի ցանկությամբ համակարգի մուտք՝ անվտանգության կոդով, կոդի ստացման հնարավորություն և՛ SMS-ի*, և՛ սարքի միջոցով <sup>3 և 4</sup>	միանվագ՝ 10000 դրամ + 2000 դրամ ամսական	միանվագ՝ 30000 դրամ + 4000 դրամ ամսական

12. ԻԱ/ԱԶ յուրաքանչյուր լրացուցիչ սարքով անվտանգության կոդի ստացման համար վճար	միանվագ՝ 7500 դրամ	միանվագ՝ 20000 դրամ
13. ԻԱ/ԱԶ/ՖԱ Սարքի կորստի (վնասվածքի դեպքում) փոխարինում*	միանվագ՝ 10000 դրամ	միանվագ՝ 30000 դրամ

*	Սակագինը ներառում է ԱԱՀ-ն
**	<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Mobile Banking/Online Banking էլեկտրոնային համակարգերում գրանցման հայտ ներկայացնելու դեպքում, բանկային դրամային ընթացիկ հաշիվ չունեցող ֆիզիկական անձ հաճախորդների համար վերոնշյալ հաշվի բացումը սահմանվում է անվճար:
1	Բանկի սակագներին ծանոթացեք "III. ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ", "XII-1. ARCA ՏԵՍԱԿԻ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ", "XII-2. MASTERCARD ՏԵՍԱԿԻ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ", "XII-3. VISA ՏԵՍԱԿԻ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ" բաժիններում: Բոլոր մյուս սակագները գործում են առանց արտոնյալ պայմանների:
2	Պլաստիկ քարտերի տրամադրման և սպասարկման ամբողջական սակագներին ծանոթանալու համար անցեք "XII-1. ARCA ՏԵՍԱԿԻ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ", "XII-2. MASTERCARD ՏԵՍԱԿԻ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ", «XII-3. VISA ՏԵՍԱԿԻ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ»:
3	ա/ հաճախորդին մինչև հաշվետու ամսվա 25 սարք/եր/ի տրամադրման դեպքում վճարը գանձվում է նույն ամսվա ընթացքում մեկ ամսվա համար, իսկ հաշվետու ամսվա 25-ին կամ ավելի ուշ սարք/երի տրամադրման դեպքում՝ հաջորդ ամսվա ընթացքում մեկ ամսվա համար: բ/մինչև հաշվետու ամսվա 5-րդ աշխատանքային օրը սարք/եր/ի հանձման դեպքում հաշվետու ամսվա համար չի գանձվում սակագին:
4	ա/Ծառայությունից օգտվելու հայտը մինչև հաշվետու ամսվա 25-ը ստորագրելու դեպքում ամսական վճարը գանձվում է նույն ամսվա ընթացքում մեկ ամսվա համար, իսկ հաշվետու ամսվա 25-ին կամ ավելի ուշ ստորագրելու դեպքում՝ հաջորդ ամսվա ընթացքում մեկ ամսվա համար: բ/Մինչև հաշվետու ամսվա 5-րդ աշխատանքային օրը ծառայությունից հրաժարվելու դեպքում հաշվետու ամսվա համար սակագին չի գանձվում:
5	Բացառությամբ MasterCard ARMEC's GOLD , MasterCard ARMEC's STANDARD և Visa Classic Plus քարտատեսակների: Համաձայն XII-2. MASTERCARD ՏԵՍԱԿԻ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ և XII-3. VISA ՏԵՍԱԿԻ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ սակագների:
6	Բանկի սակագներին ծանոթացեք՝ "IX Ժամկետային ավանդներ բաժնում՝ Դասական ավանդատեսակ":